ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 500.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 117.0 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արամ Վլադիմիրի Նիկոյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել ժառանգության իրավունքով իրեն, Նատալյա Վլադիմիրի Նիկոյանին, Յանա Վլադիմիրի Շվեցովային և Աննա Վլադիմիրի Նիկոյանին պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 1-ին թաղամաս թիվ 71 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում (կոդ 07-054-0214-0009) 1991 թվականին ինքնակամ կառուցված այգետնակը և ժառանգության իրավունքով իրեն պատկանող 500.0 քմ բնակավայրերի նշանակության հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 117.0 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինության և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Արամ Վլադիմիրի Նիկոյանին, Նատալյա Վլադիմիրի Նիկոյանին, Յանա Վլադիմիրի Շվեցովային և Աննա Վլադիմիրի Նիկոյանին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 1-ին թաղամաս թիվ 71 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում 1991 թվականին ինքնակամ կառուցվել է 112.5 քմ մակերեսով այգետնակ և ժառանգության իրավունքով իրենց պատկանող 500.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 117.0 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինության և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արամ Վլադիմիրի Նիկոյանին, Նատալյա Վլադիմիրի Նիկոյանին, Յանա Վլադիմիրի Շվեցովային և Աննա Վլադիմիրի Նիկոյանին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 1-ին թաղամաս թիվ 71 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում այգետնակը կառուցվել է 1991 թվականին, ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, այգետնակը կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 117.0 քմ տարածքը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացիներ Արամ Վլադիմիրի Նիկոյանին, Նատալյա Վլադիմիրի Նիկոյանին, Յանա Վլադիմիրի Շվեցովային և Աննա Վլադիմիրի Նիկոյանին ժառանգության իրավունքով պատկանող 112.5 քմ մակերեսով այգետնակը համարել օրինական:

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Քաղաքացիներ Արամ Վլադիմիրի Նիկոյանին, Նատալյա Վլադիմիրի Նիկոյանին, Յանա Վլադիմիրի Շվեցովային և Աննա Վլադիմիրի Նիկոյանին ժառանգության իրավունքով պատկանող 500.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 20%՝ 100.0 քմ, մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը: Մնացած ավել օգտագործվող 17.0 քմ հողամասը՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, ուղղակի վաճառքի ձևով, 23080 ՀՀ դրամով (կադաստրային արժեքի 30%, վճարել համայնքային բյուջե 900105225172 հաշվեհամարին) օտարել քաղաքացիներ Արամ Վլադիմիրի Նիկոյանին, Նատալյա Վլադիմիրի Նիկոյանին, Յանա Վլադիմիրի Շվեցովային և Աննա Վլադիմիրի Նիկոյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2017 թ. նոյեմբերի 07
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 38

500.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 66.2 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Արամ Վլադիմիրի Նիկոյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել ժառանգության իրավունքով իրեն, Նատալյա Վլադիմիրի Նիկոյանին, Յանա Վլադիմիրի Շվեցովային և Աննա Վլադիմիրի Նիկոյանին պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 1-ին թաղամաս թիվ 70 հասցեի բնակավայրերի նշանակության 500.0 քմ հողամասին (կոդ 07-054-0214-0010) կից ինքնակամ զբաղեցրած 66.2 քմ հողամասը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված հողամասի հատակագծի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Արամ Վլադիմիրի Նիկոյանին, Նատալյա Վլադիմիրի Նիկոյանին, Յանա Վլադիմիրի Շվեցովային և Աննա Վլադիմիրի Նիկոյանին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 1-ին թաղամաս թիվ 70 հասցեի բնակավայրերի նշանակության 500.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 66.2 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արամ Վլադիմիրի Նիկոյանին, Նատալյա Վլադիմիրի Նիկոյանին, Յանա Վլադիմիրի Շվեցովային և Աննա Վլադիմիրի Նիկոյանին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-3 այգետարածք 1-ին թաղամաս թիվ 70 հասցեի բնակավայրերի նշանակության 500.0 քմ հողամասից ավել օգտագործվող 66.2 քմ տարածքը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացիներ Արամ Վլադիմիրի Նիկոյանին, Նատալյա Վլադիմիրի Նիկոյանին, Յանա Վլադիմիրի Շվեցովային և Աննա Վլադիմիրի Նիկոյանին ժառանգության իրավունքով պատկանող 500.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 66.2 քմ, մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրանց սեփականության իրավունքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 07
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 39

ՊՏՂՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ և 20-րդ հոդվածների պահանջների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի «Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին» N 15-Ն և 2011 թվականի մայիսի 3-ի «Համայնքային ծառայողների վերապատրաստման կարգը սահմանելու մասին» N 05-Ն որոշումները՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Պտղնիի համայնքապետարանի աշխատակազմի 2018 թվականին ատեստավորման և վերապատրաստման ենթակա համայնքային ծառայողների ցուցակը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 07
գ.Պտղնի

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
Պտղնի համայնքի ղեկավարի 2017 թվականի
նոյեմբերի 07-ի N 39 որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

Կոտայքի մարզի Պտղնիի համայնքապետարանի աշխատակազմի 2018 թվականին ատեստավորման ենթակա համայնքային ծառայողների

Հ/Հ	Համայնքի անվանումը	Համայնքային ծառայության պաշտոնի		Պաշտոնի նշանակման		Անունը, հայրանունը , ազգանունը	Վերջին ատեստավորման ամսաթիվը	Ծանոթություն
		Անվանումը	Անձնագրի ծածկագիրը	Հիմքը	Ամսաթիվը			
1	2	3	4	5	6	7	8	9
1.	Պտղնի	Աշխատակազմի քարտուղար	1.2-1	ՀԾՄ օրենքի 15-րդ հոդված, կարգադրություն N 9	21.07.2009 թ.	Մարատ Տարիելի Պետրոսյան	24.12.2015 թ.	—

Պտղնի համայնքի ղեկավար՝ Ա. Վիրաբյան

07.11.2017թ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
Պտղնի համայնքի ղեկավարի 2017 թվականի
նոյեմբերի 07-ի N 39 որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

Կոտայքի մարզի Պտղնիի համայնքապետարանի աշխատակազմի 2018 թվականին վերապատրաստման ենթակա համայնքային ծառայողների

Հ/Հ	Համայնքի անվանումը	Համայնքային ծառայության պաշտոնի		Պաշտոնի նշանակման		Անունը, հայրանունը, ազգանունը	Վերջին վերապատրաստումը					Ծանոթություն
		Անվանումը	Անձնագրի ծածկագիրը	Հիմքը	Ամսաթիվը		Ուսումնական հաստատության անվանումը	Սկիզբը	Ավարտը	Ծրագրի անվանումը	Ուսումնական վկայագրի համարը	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1.	Պտղնի	Աշխատակազմի քարտուղար	1.2-1	ՀԾՄ օրենքի 15-րդ հոդված, կարգադրություն N 9	21.07.2009 թ.	Մարատ Տարիելի Պետրոսյան	Հայաստանի Համայնքների հանրապետական ասոցիացիա	23.06.2015թ.	03.07.2015թ	Համայնքային ծառայողների հերթական վերապատրաստում	ՆՀԾ-15-0509	—

Պտղնի համայնքի ղեկավար՝ Ա. Վիրաբյան

07.11.2017թ.